

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 4.

ՖԲԷՋՆԵՐՈՒ ԲԱՆ. ՇԱԲԱԹ, ՍԵՊՏ. 6, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

CONGRATULATIONS TO THE CITIZEN.

The Duty of Armenians—The Guarantees of This Government.

The people of the Armenian race, who have become such an important and extensive element in the citizenship of this country, are certainly to be congratulated upon the establishment and publication in their own midst and by one of their own number, of a newspaper printed in their own language and devoted especially to their interests.

The newspaper has become very largely the chief educational medium in our time, and to it people everywhere look for information on politics, current historical events literature and even art. Its influence in the county, state and nation is far beyond the province or power of estimation, and it practically moulds public sentiment and opinion upon all the subjects and matters on which it treats.

No business or enterprise in our own country has developed more rapidly or successfully within the past thirty years than that of newspaper publication, and it would seem that the limit of possibility in this regard had now been reached.

This paper, the citizen, has presented to it an interesting and important field, for it will have accomplished a great and important end if it shall educate and instruct its readers in the theories and laws of the government, and therein and thereby point out the way in which the true duty of the citizen to his government lies. In this country, above all others, every citizen should thoroughly understand the particular and peculiar theories and principles on which it is founded, for it is beyond all question the freest and best on earth, and gives him, in consideration for his allegiance, the broadest and greatest guarantees of protection, safety and liberty. So it is the primary duty of all who flee from the intolerable tyrannies and despotism of European and Asiatic governments to these shores and here enter at once into the full enjoyment of a practical unrestraint of freedom of speech and action, to learn thoroughly the system of this government in all things, to the end that they may properly appreciate its benefits and guarantees to them and render to it the patriotic allegiance which, in consideration for all it gives, is assuredly its due.

This duty is perhaps more imperative on those of the

Armenian race who have come among us than upon our citizens of any other foreign nationality, for the transition through which they have come from the terrible conditions, the rapine, massacre and plunder, the inhumanity and despotism of their native country into the enjoyment of absolute freedom and constitutional guarantee of protection to life, liberty and the pursuit of happiness, is so complete that it deserves the sincerest gratitude of which the human heart is capable.

At the threshold of this study it will be discovered that this government was founded upon the positive recognition of the rights of men, inherent, inalienable and inviolable rights, among these being chiefly and as comprising, in a general sense, all others, the right to life, liberty and the pursuit of happiness. No greater guarantees than these could be given, for in them are comprised, as just stated, all others which are essential or necessary to the capacity of the citizen to work out his own success and happiness in life.

Another interesting feature to be observed is that of the relations existing between the national government and the various states which comprise it, for in the very beginning this feature of our system gave rise to the greatest contentions and differences of opinion which divided the framers of the constitution and those who, by reason of their patriotic services at that time, are held in imperishable remembrance by our people.

No one question involved in the whole theory of our system of government gave rise to more discussion nor more bitter controversy than this, for there was one element of our people whose idea was that the federal government brought into being by the constitution was, and of necessity should be, plenary and practically unlimited in its authority and power, and that the states should be subordinate in practically all things to the general government. This idea was fiercely combatted by another element because, as they claimed, the states were still sovereign and paramount in all authority and power not granted by them to the federal government. They claimed also that according to the latter theory, the greatest liberty and freedom of the citizen would be preserved, and that any other theory would result in the establishment of a government partaking too much of monarchical forms and circumscribing too much the individual rights and liberties of the citizen.

These opposing ideas finally led to the organization of two schools of politics, which derived their nomenclature

from two men, who were among the most advanced and skillful organizers of men who ever lived, and the most masterly in working out theories of government that should control the destinies of the western hemisphere and the growth, happiness and advancement of its people.

As I said upon another occasion on this subject:

One of these schools was led by Alexander Hamilton, the other by Thomas Jefferson. The method of Hamilton was broad and latitudinarian, conferring the most extensive and independent powers on the government. His idea was that of a brilliant and magnificent general government partaking to a large extent of the splendor and unbounded authority of monarchial forms, limiting the dignity of the states and circumscribing their authority. The end to be reached was a powerful and centralized national authority, resulting from the mere will of congress than from the language of the constitution itself, or the central idea upon which it was founded.

In their judgment of this system the existence of the state was a matter more for the exercise and expansion of national authority than for any government or control the states might have over their own citizens to build up and promote their welfare or vindicate the principle of local self-government and domestic supremacy.

The theory of Jefferson was the exact antithesis of this. It held that the government of the United States was one of enumerated powers, that it could neither claim nor exercise any authority not granted to it by the constitution. His idea was that all implied power must be inherent in and arise necessarily from those expressly granted and that there was and could be no such thing as an independent implied power, separate and distinct from those expressly granted in the constitution. Congress was supreme as to all the powers granted to it; within their limit; its jurisdiction was sovereign, full and plenary, but its authority was limited by these powers alone. The principle of this idea was that the time of true demarkation between the state and national authority was well defined and fortified by the constitution itself; that while the national government is limited in its authority and must look to the constitution to ascertain if the power to act has been conferred, the power of the states is full and plenary already, and they look to the constitution not to find power to act, but to ascertain if the power has been inhibited or limited. If no inhibition or limitation is found there, this power was absolute. The true distinction was that between a power not before in existence, but conferred or delegated and over which existed already ample and complete, but which might be limited or inhibited by the constitution.

But it is impossible for me to pursue this matter further, as the limits of this article have already been reached.

I must state before closing, however, that upon the adoption of the one or the other of the ideas of government above referred to depended in large measure the success of our experiment, and perhaps nobody will deny at

this day that our rapid development in every particular of material and intellectual greatness was due to the early triumph of the Jeffersonian principle, for by and through its application this government has always been maintained as one regarding its federal aspect as but the creature and servant of the people, and as in no sense monarchical or possessing powers which could justly be exercised for limiting or lessening the constitutional guarantees to the citizen.

I regret that I have been unable to set forth the matters herein discussed more at length and with better continuity of argument, but the space allotted me forbids it. At another time I shall be glad to continue this discussion, and to call attention to other features of our incomparable system of government, if by so doing I can enlighten the understanding or quicken the patriotism of any citizen in the land.

MILES WALLACE.

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ

Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԿԱՌՔԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Հարնէս, Մարակ և Ծածկոյներ: Այս դաշտի մէջ
ամենատաժան և ընդարձակ վաճառատունը

1817—1819 Թուարի փողոց, Փոսթ Օֆիսին դիմացը:

Սաև Ռոքիֆի վալի Լմուտ Քօ,

ձ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ձէ՛Յ Փողոց, Ֆրէզնօ, Բալիֆօրնիա:

Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս զնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կարուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

ձ. Մ. Սերրբեան, ձ. Պաննըր, Յ. Մ. Սերրբեան

Տքք. Յ. Ղազարեան,

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Չանս Պաք, ԱՅ Ընթրիթ, Ֆրէզնօ, Բալ.

Գահայուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գահայուցում Յաճախորդներուն: Գինները միշտ չափաւոր:

Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

ՃՕՐՃ Վ. ՃՕՆՍ

Գատարանական ճիւղի մէջ ընդհանուր դատախազի պաշտօնը ամենակարեւորներէն մին է անկասկած: Հասարակայն ասպնջութեան պաշտպանն ու ժողովրդի իրաւանց փաստաբանն է այն, շարադրո՞ծներուն արհաւիրքն ու սարսափը: Այս կարեւոր պաշտօնին արգարագատ և փորձառու մէկը անհրաժեշտ է հանրութեան անդորրութիւնը ասպնջութեւն համար:

Յառաջիկայ Նոյ. հին նոր ընդհանուր դատախազ մը պիտի ընտրենք: Այս պաշտօնին համար երկու ընտրելիներ կան այժմ հրապարակի վրայ երկու մեծ կուսակցութեանց կողմէ սրտուած: Ասոնց երկուքն ալ թէև ծանօթ փաստաբաններ, բայց Հանրապետականաց ընտրելին՝ Ճօրճ Վ. Ճօնս՝ երկար առնելի վեր Հայոց բարեկամներէ մին ճանչցուած երիտասարդ օրէնագէտը՝ տարակիս չի կայ թէ յարմարագոյն և արժանի անձն է այս պաշտօնին:

Ճօրճ Վ. Ճօնս ծնած է Քալիֆօրնիոյ Էլտորաոտո Գաւառին մէջ և 1889է ի վեր քաղաքիս մէջ բնակած ու պարապած է փաստաբանութեամբ, ու այս երկար ժամանակամիջոցի մէջ շատ անգամ առիթներ ունեցած է իր համակրանքը ցոյց տալ Հայ ժողովրդեան: Ճօնս՝ Նահանգիս Համալսարանի օրէնագիտական վարժարանի ընթացաւարաններէն է, և կը վերաբերի 88ի դատարանին: Ֆրէզնոյի մէջ նա վարած է օգնական դատախազի պաշտօնը չորս տարի և գոհացում տուած ժողովրդեան կատարելագէտ: Իրր Գընդապետ Քալիֆօրնիոյ Նաշընլ Կարտին՝ մօտէն շփում ունեցած է Հայոց հետ ու շահած է անոնց համակրանքը: Այս վերջին պաշտօնէն Ճօնս հրաժարեցաւ վերջերս՝ հակառակ իր ստորագրատեալներու թախանձանքին: Հարկ է ըսել թէ մեր ասպնջայ հասանական Ընդհ. Գատախազը՝ Հանրապետական մը եղած է միշտ, և է ցայսօր. և թէև այս թերթ Ռամկապետական վարդապետութեանց շատագո՞վ, բայց իրեն պարտականութիւն կը սեպէ այս Հայասէր փաստաբանը յանձնարարել Հայ քաղաքացիներուն և անոնց քուէները խնդրել զայն ընտրելու համար:

Ս. Ա. ՇՈՒԱՅՉԸՐ,

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՑՆԵՐ, ԵԻՆ. Ամեն տեսակ Նորագուծներ կըլան փութով: 1920 Մարտիտոյա Ըսթրիթ, Ֆրէզնօ:

Պ. Ֆ. Շեփերտ և շ Ընկ.

1123 ՃէՅ Ըսթրիթ Պահանջները փութով կը վճարուն: Յաճախողք միշտ գոհացում կատանան:

ՃՕՐՃ ՊՐԱՏԸՐՍ

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ՃէՅ Փողոց, —Ֆիւք Պրաք— Ֆրէզնօ. Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ասպնջ իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բազաւտարար՝ ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վտակացնէք դուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է նսանալ ՃՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԷՆ:

ՄԻՀՐԱՆ Գ. ՍԷՐԱՅԼԵԱՆ

Գ Ծ Ա Գ Ր Ի Զ

849 Մարքէթ Ըսթրիթ, Սան Ֆրանսիսկօ, Քալ.

Իւզաներկ, ջրաներկ, Փասթէլ ևն. նկարներ Քալիֆօրնիոյ մէջ մեր ունեցած բազմաթիւ բարեկամներն ու յաճախորդներն պէտք չունին գովեստներ ըսել մեր գործերուն համար, որոնք իրենք իրենց համար կը խօսին արդէն: Ուստի ծանուցանել հասարակութեան մեր հասցէն բաւական կը սեպենք:

ԹՐԷՅՉ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ

ՍԻՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳԱՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ ԹԷԼԷՖՈՆ ԳՐԷՋՆԹ, ՔԱԼ ԷՔՍԷՆՆ — ԹԻՒ 2

Ֆ Ր Է Չ Ն Օ

ԼԸ ՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ ԳՐԱՍԵՆԵՍԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ ԱՅՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ ԹԷԼԷՖՈՆ — — — ՄԷՆ 24 ՖՐԷՋՆԹ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ.

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033
ՃէՅ Փողոց, Էքսփրեսիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար
Տարեկան մէկ ու կէս Տր. — Վեցամսեայ 75 Սէնթ
Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանգ — — Վեցամսեայ 5 Ֆրանգ
Բաժանորդագիրնը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին Խմբագրու-
թեան հետեւեալ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of
California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET

FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՋՆՕ՞ ՔԱԼԻՖՕՐՆԻԱ՝ ՍԵՊՏ. 6, 1902

ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Վերջապէս «Քալ. Բէյըն Կրօլըրս Ասասիէշըն» ի
վարչութիւնը իր պատրաստած ծրագիրն ու ըրած
կարգադրութիւնները, որոց անհամբեր կըսպասէին
այգեգործք, ծանոյց հասարակութեան լրագրաց մի-
ջոցաւ: Նախագահ Պութ այգեգործներուն ուղղեալ
ընդարձակ նամակով մը կը պատմէ նախ թէ ինչ-
պէս ներկայ վարչութիւնը պաշտօնի անցնելէ անմի-
ջապէս յետոյ ձեռնարկեց և յաջողեցաւ անցեալ տար-
ուան կնճռոտ և դատական խնդիրները կարգադրել ու
տարիներէ իվեր երեսի վրայ մնացած հաշիւները
մաքերը: Նախագահ Պութ կանցնի յետոյ վարչու-
թեան ապագայ գործունէութեան ծրագիրը բացատ-
րել: Այս նոր կարգադրութեան համաձայն չամիչի ըն-
կերութիւնը Սեպ. 1. 1902էն մինչև 1903 Սեպ. 1.
չամիչի վաճառականներուն գործարանները վարձու-
կանէ առանձին պայմանագրութեամբ՝ անոնց մէջ
ընկերութեան չամիչները ստանալու և «փոք» ընելու
համար: (Եւ այս շէնքերը՝ հարկ է ըսել՝ ընկերու-
թեան ուղղակի տրամադրութեան տակ անոնք ան-
ցելոյն անհաճոյ միջադէպները արգելելու միակ միջոցը
նկատուած է իրաւամբ): Նախագահ Պութ կը խոս-
տանայ քիչ ժամանակէն հրատարակել ցանկը այն
վաճառատանց որոնք յանձն առած են այս պայմա-
նագիրը կնքել ընկերութեան հետ: Նկատելով որ այս
տարուան չամիչի բերքը անհամեմատ առատ է, նկա-
տելով այս չամիչներուն վրայ գոհացուցիչ նախա-

վճար մը ընելը դժուարին պիտի ըլլար ներկայ պա-
րագաներու ներքև՝ հակառակ այգեգործներու ակն-
կալութեանց, և նկատելով որ դրամատուններէն՝ եր-
կու տարի առաջ ի գործ դրած ձեռով և ընկերու-
թեան երաշխաւորութեամբ դրամ փոխ առնելը ան-
հաճոյ ձեռնարկ մը կը նկատուի այգեգործին կողմէ՝
վարչութիւնը կը թելադրէ Նախագահի միջոցաւ՝
արտօրնութիւն ստանալ ընկերութեան ընդհանուր ժու-
ղովէն փոխանակ 100000 տուար փոխ կրնալ առնե-
լու իրաւասութեան՝ արտօրնութիւն տրուի իրեն կէս
միլիոն տալեր փոխ առնել այս անպատեհութեանց
առաջն կրնալ առնելու համար: Վարչութիւնը կը ծա-
նուցանէ նոյնպէս թէ այս մտտերս ընդհանուր ժողով
մը պիտի կանչէ կանոնական այս կէտը բարե-
փոխելու խնդիրը ընկերութեան քուէին ենթարկելու
նպատակով: Եւ որովհետև այս դրադման օրերուն
մեջ դժուարին պիտի ըլլար բոլոր այգեգործներուն
ներկայ ըլլալ ժողովին՝ վարչութիւնը այս մասնաւոր
կէտին համար առանձին քուէաթուղթեր պիտի զրկէ
բոլոր անդամներուն, որպէսզի ներկայ գտնուելու ան-
կարող անդամներն անոնց միջոցաւ իրենց կամքը
յայտնեն թելադրուած փոփոխութեան համար:

Վարչութիւնը կը խնդրէ նաև այգեգործներէն որ
բնաւ չի փորձեն իրենց երկրորդ բերքերը (սէքընտ
քրափ) չամիչ ընել այս տարի, քանի որ առաջիննե-
րը բաւականէն աւելի մեծ քանակութեամբ ապրանք
պիտի դնեն հրապարակի վրայ:

Վարչութեան և վաճառականներու միջև եղած
պայմանագրութիւնը՝ բացի օրինական և կարգ մը
երկրորդական կէտերէ՝ իրաւունք կուտայ ընկերու-
թեան չամիչի գինը որոշել, և ամեն մի վաճառա-
կան կը խոտտանայ իր գործարանին մեջ ընկերու-
թեան կողմէ ընդունուած չամիչները առնել անոր
որոշած գներով՝ պայմանաւ որ այդ ծախու առնուած
ապրանքները ընկերութեան ստացուածքը մնան մին-
չև որ անոնց ֆոփոխները վճարուի սմբողովին:
Պայմանագրութիւնը կը որոշէ չամիչը մազելու, սրն-
տուկներու մէջ տեղադրելու և ուրիշ ծախուց քա-
նակութիւնն մանրամասն կերպիւ:

Ի հարկէ այս կարգադրութիւնները գոհացուցիչ
են այգեգործներուն, բայց կայ տակաւին անստոյգ
կէտ մը որ մտատանջութիւն կը պատճառէ:

Այդ կէտ սա է թէ յիշեալ պայմանագրութիւնը
պիտի ընդունուի բոլոր վաճառական տուններէն թէ
ոչ. վասնզի եթէ ասոնցմէ ոմանք դուրս մնան՝ կը
վախցուի որ մրցում մը տեղի ունենայ դարձ-
եալ երկու բաժանմանց մէջ՝ անցեալ տարիներու նը-
ման՝ և ընկերութիւնը չի կարողանայ իր սրտ-
չած գինը անփոփոխ պահել մինչև վերջ: Արկէ զատ
եթէ դուրսէն կանխիկ դրամով չամիչ գներու
յանձնատու վաճառականներ գտնուին, այգեպաննե-
րէ շատեր նախապատիւ պիտի սեպեն ընկերութեան
դուրս մնալ՝ առերևոյթս քանի մը տուար աւելի չա-
հելու յոյսով: Անցեալ քանի մը տարուան պատմու-
թիւնը իրաւունք կուտայ այգեպանին մտածել այս

կէտին վրայ, որ ներկայ պարագաներու տակ ամե-
նածանր վտանգ մը կրնայ նկատուիլ:

ՎԵՐՋԻՆ ՊԱՀ

Վերի յօդուածը շարուած էր արդէն երբ Չամիչի
Ընկերութեան վարիչներու կողմէ փափաք յայտնուեցաւ
թերթի միջոցաւ ըսել Հայ այգեպաններուն թէ այլ
ևս բնաւ կասկածի կամ երկիւղի տեղ չէր մնացած
ընկերութեան յաջողութեան մասին: Աւրախալի է ար-
ձանագրել թէ բոլոր «փաքները» առանց բացառու-
թեան՝ ընդունած են վարիչներու պայմանները՝ թէև
անոնցմէ քանին գեռ ստորագրած չէ պայմանագրու-
թիւնը: Այս իրողութիւնը բաւական ըլլալու է այ-
գեպաններու համար իրենց վատաշուքիւնը աւելի և
աւելի անխախտ ընել ներկայ վարչութեան վրայ,
որ ոչ միայն անցեալ տարուան կնճիռներն մաքրեց
մեծ յաջողութեամբ՝ այլ իր այժմեան ուղղութեամբ
առանց մեծ ախօսութիւններ ընելու և առանց ձայնի
յաջողեցաւ ընկերութիւնը գնել այնպիսի դիրքի մը
վրայ ուր յաջողութիւնը անկասկածելի է և այգե-
պաններուն մէջ բաժանում՝ անկարելի ըլլալու չափ
զժուարին:

Ներկայ վարիչները արժանի են ամեն գովեստի:

ՔԱՆԻՑՈՐՆԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Բ.

Քալիֆօրնիա Նազանգը միւս քոյր նազանգներուն
պէս անձատ կառավարութիւն մ'է՝ անկախ ինքն իր
մէջ: Կը կառավարէ ինքզինքը իր յատուկ օրէնքնե-
րով. տուրքերը կը հաւաքէ. յանցաւորը կը պատ-
ժէ. օրէնքներ կը հաստատէ իր փափաքած ու յար-
մար դատած եզանակաւ՝ պայմանաւ որ այդ օրէնք-
ները, ինչպէս որ ըսուեցաւ, ոչ մի տառ պարունակեն
Ազգային Սահմանագրութեան հակառակ:

Սակայն այս անձատ Նազանգը(*) իր անկէխութիւ-

(*) «Ըսթէյթ» բառը որ սխալմամբ Նազանգ թարգ-
մանուած է մեր մէջ, կառավարութիւն կը նշանակէ:
Եւ իրաւամբ այս երկիրը միացեալ կառավարութիւն-
ներ անուանելու էինք Հայերենի մէջ՝ փոխանակ մի-
ացեալ նազանգներ կոչելու զանոնք, վստահի ոչ մի-
այն ըսթէյթ բառը սխալ թարգմանած ենք՝ այլ և
այս մեր նազանգ անուանածները անձատ կառավա-
րութիւններ են բոլորովին՝ իրարու թէ՛ն զաշնակից:
Այնչափ սխալ է Քալիֆօրնիան նազանգ մը առա-
նելը՝ որչափ սխալ պիտի ըլլար երբեակ զաշնակցու-
թեանց որ և է մէկին նոյն անունը տալ: Եւ որով-
հետեւ երկար ատենէ ի վեր գործածուած և ընթեր-
ցող հասարակութեան մէջ ընդհանրացած այս թարգ-
մանութիւնը ուղղելը զժուարին պիտի ըլլար մէկ
թերթի մը համար, նոյն սխալը ստիպուած ենք
գործածել այս յօդուածներու մէջ՝ փափաքելով որ
դէթ Ամերիկեան Հայ մամուլը ու Հայ հրապարակա-
գիրները այս մասին հասկացողութեան մը գային ու
տակէ վերջ փոխանակ Միացեալ Նազանգներ թարգ-
մանելու՝ Միացեալ կառավարութիւններ անուանելին
մեզ հիւրնկալող այս երկիրը:

նը ունենալով հանդերձ՝ Միացեալ Նազանգաց մէկ
զաշնակից կառավարութիւնն է. անկէ ստացած է իր
իր կառավարութիւն կազմակերպուած ըլլալու իրաւ-
ունքը և որոյ օրէնքներուն ստիպուած է հնազանդ
ըլլալ: Նազանգ մը իբր անձատ կառավարութիւն
իրաւունք ունի իր սահմանին մէջ անկախ կերպիւ
կառավարել ինքզինքը, բայց անկէ դուրս, այդ սահ-
մանէն անդին՝, ինչ որ կը վերաբերի Գաշնակցական
կառավարութեան, իրաւունք չունի բնաւ քայլ մ'ան-
գամ փոխել:

Գաշնակցական կառավարութիւնը, որ կը բաղկանայ
բոլոր նազանգներէն և որոյ մէջ Քալիֆօրնիան ալ
իր ձայնը ունի, միայն՝ կարող է օտար տէրութեանց
հետ յարաբերութեան մտնել, պատերազմ հրատա-
րակել, զաշնակցութիւններ կնքել, դրամ կոխել,
թղթատարութիւնը, նաւատորմը, բանակը ու մաքը
կառավարել, ու զանոնք իր անմիջական իշխանու-
թեան ներքեւ ունենալ: Բոլոր Նազանգներէն ընտր-
ուած ներկայացուցիչները միայն կարող են այնպի-
սի օրէնքներ հաստատել որք գործադրելի ըլլան ա-
մեն նազանգներու մէջ անխտիր. իսկ նազանգները
առանձին առանձին կամ քանինները միասին բնաւ
իրաւունք չունին իրենց սահմաններէն դուրս ու և
է գործի խառնուիլ կամ այնպիսի խնդիրներու մէջ
մտնել որք իրենցմէ դուրս ուրիշ նազանգներու իրա-
ւանց հետ կրնան բաղխիլ ու և է կերպիւ:

Քալիֆօրնիա Նազանգը կազմակերպուած է 1849-
ին և Քոնկրէսի կողմէ վաւերացուած ու ընդունուած
1850ին, անանկ որ կէս դարու կեսնք ունեցող մա-
նուկ իշխանութիւն մ'է այս՝ թէև իր հասակին նայե-
լով հսկայաքայլ յառաջադիմած ու զօրացած է ինքն
իր մէջ:

Քալիֆօրնիոյ կառավարութիւնը միւս նազանգե-
րու պէս կը բաժնուի իրեք գլխաւոր ճիւղերու, որք
են՝ Օրէնդիր, Գործադիր և Գատարանական ճիւղեր:

Օրէնդիր ճիւղը Նազանգին Վէճիպէչըրն է, կամ
օրէնդիր բարձրագոյն մարմինը որ կը բաղկանայ
երկու ժողովներէ՝ Երեսփոխանական ժողով ու Ծերա-
կոյտ, (Ասամբլի էնա Սինէթ): Այս ճիւղին կը վե-
րաբերի նաև Գաւառներու (Քաւնթի) բարձրագոյն
մարմինը (Սուպրուայզը) որ իրաւունք ունի իր գաւա-
ռին մէջ կատարել այն պաշտօնը ինչ որ Վէճիպէ-
չըրը կրնէ Նազանգիս հանդէպ: Օրէնդիր մարմնոյ
գործադիր ճիւղը Վէճիպէչըրի շինած օրէնքները գոր-
ծադրող մասն է որ կը բաղկանայ հետեւեալ պաշ-
տօնեաներէն, Նազանգապետ, փոխ-Նազանգապետ,
Նազանգային-Ատենողակիր (Սէքրէթերի օֆ Ըսթէյթ)
Քոնթրոլը, Գանձապետ, Ընդհանուր Փաստարան և
Արտէսըր:

Նազանգային կառավարութեան երրորդ ճիւղը
կը կազմեն Նազանգային Գերագոյն Գատարանը,
Գաւառական Բարձրագոյն Գատարանները և միւս
երկրորդական գատարանները:

ՅՐԷՋՆՈՒ ՀԱՅ ԿԱԼՈՒԱԾԱՏԵՐԵՐԸ

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

(Շարունակութիւն)

32. Չուճեան Եղբարք արտավար այգի	30
" " " ծառաստան	15
" " " Յորենի հող	115
33. Մ. Թորոսեան " այգի	80
34. Սերոբեան Եղբարք " "	50
35. Յ. Աժտերեան " "	40
36. Գասպար Մխանեան " "	35
37. Մանուկ Կարապետեան " "	20
38. Յակոբ Էժտերեան " "	40
39. Գ. Առաքելեան " "	20
40. Արշակ Փիթըր " "	20
41. Աւէքսան " "	40
42. Մ. Մինասեան " "	25
43. Շահմիրեան Եղբարք " "	5
44. Տէր. Աղէքսանդրեան " "	40
45. Փօլ Շահմիրեան " "	60
46. Յ. Մարաշեան " "	20
47. Ս. Սարաֆեան " "	40
48. Եղեարք Ոսկերչեան " "	20
49. Կ. Եռուսեֆեան " "	40
50. Մ. " " նոր անկած	40
51. Գ. Պաղտեան " "	40
52. Աւետիս Կոկոսեան արտավար այգի	20
53. Պետրոս Փէրչէնճցի " "	20
54. Պատ. Պօղոս " "	20
55. Մ. Մխանեան " "	40
56. Տիգրան Գալուստեան " "	40

(Շարունակելի)

Արտեմ Յ. Եանրզեան

(ՎԱԼԻ-ՍՍՑՔԼԻԻ)

ԹԻԻ 2114 ՅՐԷՋՆՈ ԸՍԹՐԻԹ, ԹԷԼԷՅՅՈՆ, ՈՒԱՅԹ 717
 Կը վաճառէ ՏԷՅԹՐԸՆ անուն համրուաւոր հեծել-
 անիւը զիւրամատչելի պայմաններով :
 ՄԱՍՆԱԳԷՏ Նորոյիչ ամէն տեսակ հեծելանիւրի :
 Գեւ ոչ մի յաճախորդ դժգոհ չէ մեկնած այս խա-
 նութէն : Փորձ մը պիտի համոզէ Ձեզ :
 Մասնաւոր ուշադրութիւն Հայ յաճախորդաց :

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՑԻԻ տպարանին մէջ կը տպուին ամեն
 տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցետամս, նա-
 մակապուրիս, պաշարան, հարսանեկան ծանուցագիր և
 տեսարակներ. գոհացուցիչ գներով :

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ

Ամէն անոնք՝ որք կը փափաքին վիճակի տպուած
 որ և է զիրք ստանալ, կրնան զայն ձեռք բերել խըմ-
 րագրութեան միջոցաւ, որ նոյն Մխարանութեան գոր-
 ծակալ կարգուած է :

Քաղաքիս Ե. Ք. Ընկերութիւնը գիշերեայ վար-
 ժարան պիտի սկսի մասնաւորապէս գործաւորներու
 համար : Պիտի սորուեցնէ վճարեալ յատուկ դասա-
 տուններու միջոցաւ թուարանութիւն, տոմարակալու-
 թիւն, լեզու և գծագրութիւն : Սէն մի աշակերտ
 իրաւունք պիտի ունենայ առանձին դաս առնել ա-
 ռանց դասարանի մը վերաբերած ըլլալու : Այս կար-
 գադրութիւնը եղած է զիւրութիւն տալու իւրաքան-
 չիւր աշակերտի յառաջդիմել իր կարողութեան չա-
 փով՝ առանց կապուած ըլլալու դասակից ուրիշ ըն-
 կերներու հետ : Գպրոցը պիտի բացուի Հոկտ. 1ին
 և պիտի սկսէ վեց ամիս : Մտից գինը կամ բոլոր
 թողակը ամբողջ ընթացքին համար հինգ տոյարի չափ
 է : Աւելի մանրամասնութեանց համար գիմելու է
 ընկերութեան կեդրոնատեղին :

— Հասարակաց դպրոցները կը բացուին այս տարի
 ամսուս 15ին երկուշաբթի օր : Աշակերտաց թիւը
 ուրիշ տարիներու նայելով շատ մեծ կերելի, իսկ
 դպրոցներու շէնքերը շատ փոքր ու սահմանափակ :
 Կըսուի թէ Տեսուչ Մըք 1էն մեծ նեղութիւն պիտի
 քաշէ այս մասին մինչև որ նոր շէնքերը կառուցուին :

— Յակոբ, Մկրտիչ և Յարութիւն Ոստիկեան 80 ար-
 տավար այգի գնեցին 16 հազար տարերի :

— Օգոստոս 28ին սեղի ունեցաւ ամուսնութեան
 հանդեսը Պր. Մարտիրոս Գուլամճեանի և Օր. Մար-
 եամ ֓ուլաթեանի : Պատուելի Յիւրեան կատարեց պա-
 կի արարողութիւնը Հայ Երից. Եկեղեցոյ մէջ :

— Տոք. Ա. Թոփրազանեան օր քաղաքս այցելած
 էր Քօլթըն գնաց ուր կըզբաղի Ատամազործութեամբ :

— Տոք. Յ. Թոփրազանեան Պր. Վ. Արսէնեանի
 հետ, 1օս Անճէլըս գնացին շաբաթ մը հոն անցնե-
 լու համար :

— Տոք. Ղազարեան Հայ ատամազործը քաղաքս
 վերադարձաւ իր երկու շաբաթուան արձակուրդէն :

— Պր. Գեղամ Նշիկեան կարճատև այցելութենէ
 մը վերջ Արամիտա վերադարձաւ :

— Մասաչուսէթս Նազանդի Փիթաֆիլիտ քաղաքէն
 քաշուած հեռագիր մը կըսէ թէ անցեալ Չորեքշաբ-
 թի օր Նախագահ Բուզուէլի՝ 1էնօքս երթալու հա-
 մար՝ նոյն քաղաքի մէկ մեծ փողոցէն անցած ատեն՝ իր
 կառքը, որուն մէջ կային շատ մը ճամբորդակիցներ,
 ելեքտրական կառքի մը հետ բաղխած է ի ներկա-
 յութեան խուսն բազմութեան մը որ խոնած էր ող-
 ջունելու Մ. Նազանդաց Գերադոյն պաշտօնետոյն :

Նախագահ Բուզուէլի շատ թեթև ցնցում մը
 միայն կրած է, իսկ իր ճամբորդակիցներէ մին՝ գաղտ-
 նի ոստիկան Կրէյկ մեռած և ուրիշներ ծանրապէս
 վիրաւորուած են :

— Քաղաքիս դպրոցներու վարչութիւնը Ֆ. Հ. Գրա-
 դարանի Միւլթեան սրահը վարձու կուզէ նորէն՝ զայն
 իրը դպրոց գործածելու համար :

Խ Ո Ս Տ Ա Յ Ի Ր

Խօսք սուր ինծի հայ ապրիլ միշտ հայաստանցի աղջիկ ճան,
 Հայրենիքիդ զեփեռաներէն քեզ շինել տամ պատմուճան.
 Մասեաց բարձր զլիւն վրայ զիզուղ ամպէն՝ քեզ ձեռնաց,
 Երկնից անհրա կապոյտներէն քեզ պատրաստեմ հովանաց:
 Վարդեր ցանեմ ճամբուդ վրայ ցան ու ցիր.
 Լեզուդ պահել՝ սզգգ սիրել խոստացիր:

Մեր Հայրենեաց զմուշտի պէս լերանց կողէն՝ ատաներիւ.
 Տարբեր սեսակ ծաղիկներէ քեզ պատրաստեմ վերարիւ.
 Գոտիի սեղ մէջքէդ կապեմ Հայաստանի ծիրանին,
 Ոչ թագուհիք, իշխանազունք ոչ ոք քեզի նմանին:
 Վարդեր ցանեմ ճամբուդ վրայ ցան ու ցիր.
 Հոգիդ սիրես ինձ հայ ապրիլ խոստացիր:

Արշալոյսէն քեզ ձեռն տամ նուրբ հանդերձներ ու շղարջ՝
 Ճեմած պահուդ ետեւէդ զան քղանցքներից քարջ ի քարջ.
 Առաւօտեան լուսոյ տասեղք ակնոց ըլլան քու աչաց,
 Քեզ պահապան պաշտպան կանգնին հոգիք նախնի մեր քաջաց:
 Վարդ ու ծաղիկ ճամբուդ վրայ ցան ու ցիր,
 Ազգդ սիրել, լեզուդ պաշտել խոստացիր:

Ազգիդ սիրուն կեանքդ ալ զոհել խօսք սուր ինծի աղջիկ ճան,
 Վճիտ լուսնի զուտ արծաթէն քեզ թափել տամ սպրանջան.
 Երկնից կապոյտ կամարներէն ժողուեմ ասաղեր լուսեղէն,
 Գլխիդ անկէ պսակ շինեմ՝ ճակարիդ վրայ զեզգեղէն:
 Վարդեր ցանեմ ճամբուդ վրայ ցան ու ցիր.
 Կեանքդ ազգիդ նուէր բերել խոստացիր:
 Հ. Լ.

ԱՅԳԵԿՈՒԹԸ

Ֆրէզնօ քաղաքը ամայացած կերևի, ժողովրդեան մեծ մասը այգիներու մէջ զբաղած է այժմ. ամեն կողմ հազարաւոր Չինացի և Ճարոնացի գործաւորներ խաղողները կը կթեն ու զանոնք մասնաւոր տախտակներու վրայ զնելով արեւին առջև կը շարեն քով քովի՝ չորնալու համար: Բերքը անհամեմատ առաւ է ամեն տեղ: Ալգեպանք բաւականաչափ տախտակ (թրէյ) չի կրնարով գտնել թուղթ կը գործածեն տախտակի փոխարէն: Ժպիտ մը կայ ժողովրդի ղէմքին վրայ. գոհունակութեան արտայայտութիւնը ակներև է ամեն տեղ: Բերքին ոտատաթիւնը, բարձր գին մը առնելու յոյսը ինչպէս նաև Չամիչի ընկերութեան գոհացուցիչ վիճակը բոլոր այգեպաններուն, ինչպէս նաև Հայոց մէջ մեծ սպեւորութիւն յառաջ բերած են: Գինի չինող ընկերութիւնք ալ կսուր թէ այս սարի աւելի բարձր գին մը տալ մտադիր են խաղողներու երկրորդ բերքին որ կը հասունայ քանի մը շաբաթներէ վերջ: Հակառակ այն կարծիքին թէ այս սարի գործաւոր դասերը զժուարին պիտի ըլլար, շատ ճարոնացիներ Ֆրէզնօ եկան Չինացի գործաւորներու բաց թողութիւնը տեղը լեցնելու համար: Հայ այգեպաններէն ոչ ոք նեղուած է ցարդ այս մտայն: Շատեր իրենց այգեկուծը լմնցուցած ու խաղողներու չորնալուն կսպասեն: Եղանակը նպատաւոր կերթայ, և եթէ մէկ երկու շաբաթ ալ այսպէս շարունակէ ու Ֆրէզնոն ազատ մնայ անձրևէ, այգեպանք ամեն վտանգէ ազատուած կըլլան:

ՖՐԷԶՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹՐԸՐԻ

*** Ա. Տ Ի Ա Է Չ Չ Ի Օ — ՏԷՐ ***
 Սան Պէնիթօ փողոց, ճէյի մօտ:
 Ֆրէզնօ, Քալիֆորնիա:

Թ Ր Է Յ Ն Ե Ր

100,000 ԱԼ թուղթի թրէյդ կը ծախուին
 Վարձու առնելէ շատ աժան գներով:
 Օրինակը տեսնելու կամ գնի համար դիմել Ա.Ն.
 ՃՕՆ ԿՐՈՒՄԷԹԹ,
 Մատիսըն և Պանըրիմիոցաւ
 1144 Ճէյ Ըսթրիթ.

*** ՓՈՐՇԵՑԷՔ ԳԱՅՆ ԵՒ ՀԱՄՈՉՈՒԵՑԷՔ: ***

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Գ Ջ Ս Ի Ր Ը

ՖՐԷԶՆՈՅՆԵՐ

Փ Ո Ւ Ջ Ի , Գ Ե Ղ Չ Ի Օ Ի Ա Մ Բ Ե Ն Տ Ե Ս Ա Կ

Մ Ե Ր Ո Ւ Բ Ե Ա Ն Ե Ղ Մ Ա Ր Ի

Ամենատարբեր գին կը վճարուին

ՎԵՂԻՍԻՍ ԳԻՆՈՒՄԻ

ՎԵՂԻՍԻՍ ԳԻՆՈՒՄ

ՏՈՒԲ ՄՈՒՂ

Sofitel Paris

Երկրորդ աստիճանի անկիւնը

Ֆրէզնօ և ԱՅ Պ օրհնակ

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

—Սէրը աչք ունի բայց չի քնանար՝ արթուն է միշտ մարդուս մէջ:

—Չինաստանցիներուն մէկ շատուածը ծնած ուստեն 70 տարեկան է եղած. և այդ է եղեր պատճառը անոր մեծ խմաստութեան:

—Երջանիկ են անոնք որոց ցաւերը աւաղի վրայ կը գրուին, իսկ յաջողութիւններն՝ մարմարիոնի:

—Կնոջ շրթունքները գոց ըլլալու են երբ անոր սիրտը բաց չէ:

—Սէրը տարիներու սառնամանեաց մէջ երկասարգութեան կայծը վառ կը պահէ միշտ:

—Բըսըլ Սէյճ հետեւեալ խրատները կուտայ երկտասարդներուն:

Շահածդ մէկ տուարին 25 սէնթը պահէ, եթէ կրնաս 75ը պահէ, բայց 25ը պահելու ես անպատճառ:

Ամեն առաւօտ որոշեալ ժամանակ անկողնէդ ելիր: Գործէ քանի որ առձեռն եղած գործդ ըմբոսցած չես. գործէդ մի դադրիր ժամը վեց ըլլալուն համար:

Արդար եղիր, ճշմարտութիւնը ըսելու քաջութիւն ունեցիր միշտ:

Ուրիշի վրայ յոյս մի դնէր, հոգ չէ եթէ հարուստ հայր մ'իսկ ունենաս. բաղդդ ձեռքովդ շինէ:

* * * * *

Ռուսաց համբաւուոր գրագէտը՝ Պուշկին կերակուրէ վերջ սովորութիւն ունի եղեր եփած խնձոր մը ուտել: Օրին մէկը ճաշի սեղանին վրայ եղած աւտեն գիւղացի հիւր մը դուռը կը զարնէ ու ծառայի կողմէն հիւրանոց կառավարուի, հոն քանի մը բոպէ սպասելու համար գրագետի գալուտեան: Գիւղացին երբ առանձին կը մնայ սենեակին մէջ կը տեսնէ թէ սեղանին վրայ եփած աղւոր խնձոր մը կայ, որ ի հարկէ հոն գրուած էր Պուշկինի համար: Գիւղացին չի կրնալով ախորժակը զսպել, կուտէ խնձորը, առանց տարակուսելու թէ մէկը պիտի կասկածէր: Պուշկին ներս գալուն պէս կը տեսնէ խնձորին բաձակայութիւնը ու դառնալով գիւղացիին կէտ, —Պարոն, հոն խնձոր մը կար գրուած գիտես ո՞վ առաւ:

—Չէ, Տէր իմ, լուր չունիմ.

—Մի գուցէ մէկը կերած ըլլայ սխալմամբ. անոր մէջ թոյն դրած էր.

—Աստուծոյ սիրուն, կը պոռայ Գիւղացին սարսափահար կաթ բերէք ինձի կաթ:

Իռլանտացի աղքատի մը մէկը օր մը Սըր Ուօլթըր Ըքսթի կը հանդիպի ու կէս շիլին ողորմութիւն կը խնդրէ: Բայց մեծ Անձանօթը մանրուք գրամ չունենալուն համար շիլին մը կուտայ աղքատին ու կըսէ խնդալով,

— Հոս նայէ, ինձ կէս շիլին կը պարտիս հիմայ:

— Սա՞ Տէր, կը պատասխանէ աղքատը, կը մաղթեմ որ ապրիս՝ մինչև որ այս պարտքս վճարեմ քեզի:

ՍԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար դիմէ Սըթըրն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին համար տամ կը վաճառէ միւնչոյն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ

Տիվիժըն Փասինճըր Էյճընթ: Սիթի թիքէթ Էյճընթ Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 Ճէթ Փողոց, Նոր Փաթըրսըն Պաքին առջև

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒՂԱՐԻ ԸՍԹՐԻԹ Մեծաքանակ Վաճառականք Նափայի, Սընօմայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Բիւմաթիզմի ապահով գեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Ըուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԿՈՒՋԵՆՔ

Ամեն հայաբնակ քաղաքի մէջ Շարթաթերթն ստարածելու համար: Պայմանները շատ նպաստաւոր են: Գրել խմբագրութեան հասցէին:

Քաւար Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ ուղեւորներու արտագրած պտուղներն և՛ կը վատահացնեն թէ ամէն յաճախորդ գո՛հ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

—Ռամկավարականաց Նահանգային Ընդհ. ժողովը տեղի ունեցաւ շարթուս մէջ ի Սաքրամէնթօ ու հետեւեալ ընտրելիները որոշեց:

Նահանգապետ՝ Ֆրանքլին Ք. Լէյն, Տեղակալ—Նահանգապետ՝ Իզէտօր Տաքուէյլլըր, Գերագոյն Դատաւոր՝ Ճ. Ք. Լօ, Գերագոյն ատենի Դատաւորներ՝ Է. Ս. Ֆարնուօրթ և Է. Ք. Թրաք, Նահանգ. Դիւանադպիր՝ Ա. Բօզաքո, Բօնթրօյլ՝ Ֆրէտ Վ. Հարթի, Ընդհ. Փաստաբան՝ Վ. Ա. Ճէթ, Գանձապետ՝ Ս. Հ. Պրուքս, Դպրոցներու Տեսուչ՝ Է. Վ. Լինտօրի, Գերագոյն Դատաբանի Դպիր՝ Լ. Հ. Ուիւսըն, Կառավարական տպագրիչ՝ Հ. Ի. Վուսթըն:

ԱԶԳԱՑԻՆ ՄՍՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Յառաջիկայ Կիրակի, 7 Սեպտեմբեր, Ութօրէք Վերափոխման. Ազգային Եկեղեցւոյ մէջ Ժամերգութիւնք կ'ըսկսին ժամը 9. 30 րէն:

Քարոզի ժամն 11. Նիւթն է «Հայրը Ամուսնութեան մէջ»:

Երեկոյեան ժամը 3ին կըսկսի կիրակնօրեայ դասը. Նիւթն է Երկրորդ պատուիրան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Ժամը 7ին պիտի կատարուի հանգիստապէս երկու Պատկազրութիւն. Պ. Հայկակ Էկինեանի Օր. Ազնիւ Աւթունեանի հետ. Պ. Սահակ Պետրոսեանի Օր. Աննա Քէօշէեանի հետ: